Դավիթ
ԽԱՉԻՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

1992 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: Աշխատել է տարբեր մասնավոր ձեռնարկություններում: 2012 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Դասավանդում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում: Հեղինակ է մի շարք գիտական հրապարակումների և գեղարվեստական ստեղծագործությունների:

ORCID - https://orcid.org/0000-0002-4945-1553

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-74

Այն երկիրը, որն այսօր խնայում է կրթության վրա, ապագայում ստիպված է լինելու դրամ ծախսել բանտեր կառուցելու համար:
Օտտո ֆոն Բիսմարկ

Հիմնաբառեր. *կրթություն, Ռիչարդ Ֆեյնման, կառավարման համակարգեր, Հռոմի ակումբ*

Կրթության ոլորտի կառավարումը և արդիականացումը, լինելով հիմնարար առաջնահերթություններ, պետք է դառնան պետական քաղաքականության անկյունաքարերից մեկը: Միայն որակյալ կադրեր պատրաստելով՝ հնարավոր է հաղթահարել երկրի առջև ծառացած հիմնախնդիրները և կառուցել ապագայի փոքրիշատե իրատեսական տեսլական: Այսօր դպրոցներում և բուհերում սովորող երիտասարդությունը վաղն արդեն իր ձեռքն է առնելու երկրի կառավարման պատասխանատվությունը, ուստի գիտելիքի գործնական կիրառման հարցերն անչափ էական են: Այս առումով, պետք է կարևորվի ողջ կրթական գործընթացի՝ ժամանակի պահանջներին համահունչ և ճիշտ կազմակերպումը:

Գրագետ և ռացիոնալ աշխարհընկալման համար անհրաժեշտ է ոչ միայն նայել, այլև տեսնել, ոչ միայն ականջ դնել, այլև լսել: Տեսնել, լսել և հասկանալ: Տեղեկության ստացման, վերլուծման և հետևություններ անելու շղթայական գործընթացը միայն սոցիալական հարթակներին վստահելը հղի է ամենավտանգավոր հետևանքներով ոչ միայն սոցիումի մաս կազմող անհատի, այլև պետության ու պետականության համար: Աշխարհն իրական է, և աշխարհընկալումը նույնպես պետք է լինի իրական:

Ներկայում Հայաստանի կրթական համակարգում ցավալիորեն զանգվածային պահանջարկ են վայելում առավելապես հումանիտար բնույթի դիսցիպլինները[1]: Սակայն, պատկերը պարզ կդառնա, եթե համեմատու-

[1] Մենք հատուկ չենք օգտագործում «առարկա» եզրույթը, քանի որ վերջինս շատ ավելի նեղ իմաստ է ձեռք բերել, քան «դիսցիպլինը»:

թյուն անցկացնենք տեխնիկական մասնագիտությունների դասավանդման հետ: Տրամաբանությունից դուրս է համալսարանական ուսուցումը կղզիացնելը զուտ տեսական ֆիզիկայի կամ մաթեմատիկայի ոլորտում՝ դա չհամադրելով գործնական ներդրման հետ: Նույն պատկերն է նաև հումանիտար մասնագիտական կրթության ասպարեզում: Պետք է արձանագրենք, որ տարբեր դիսցիպլինների մատուցումն ինչ-որ իմաստով մնում է օդում կախված, քանի որ չի ապահովվում դրանց օրգանական կապը և, որ ամենակարևորն է, գործնական կիրառությունը: Օրինակ՝ այսօր մասնագիտական բուհերում դասավանդվում է «Տնտեսագիտության տեսություն» առարկան, իսկ ոչ մասնագիտականներում՝ պարզապես «Տնտեսագիտություն», որը, հաշվի առնելով կրթական ցենզի աստիճանական անկումը, սահմանափակվում է զուտ ճանաչողական բնույթի խնդիրներ քննարկելով: Մինչդեռ շատ ավելի նպատակահարմար և հեռանկարային կլիներ դասավանդել ոչ թե տնտեսագիտություն, այլ քաղաքական տնտեսագիտություն (քաղաքատնտեսություն), քանի որ այսօրվա աշխարհն ընկալելն այլ կերպ արդեն անհնար է, երբ ամեն ինչ ավելի քան քաղաքականացված է: Խոսել տնտեսական գործունեության մասին՝ առանց քաղաքական ենթատեքստի (և հակառակը), պարզապես անհարիր է: Պահի խորհուրդը հասկանալու համար պետք է երևույթներին վերևից և մի քիչ հեռվից նայել, քանի որ մոտակա հայացքը հաճախ թյուրընկալման է հանգեցնում: Յուրաքանչյուր երևույթի վերաբերյալ տեղեկություններ շատ կան նույնիսկ համացանցում, բայց պետք է կարողանալ գտնել այդ աղբյուրները, կարդալ, հետազոտել և հետևություններ անել: Մաո Ցզեդունի բառերով ասած՝ երբ քամի է փչում, պետք է ոչ թե պատ կառուցել, այլ հողմաղաց:

2017 թ. Հռոմի ակումբի (The Club of Rome) համանախագահներ Անդերս Վիյկմանը և Էրնստ Վայցսակերը, 38 այլ անձանց համահեղինակությամբ, ներկայացրին «Come On! Կապիտալիզմը, կարճատեսությունը, ազգաբնակչությունը և մոլորակի կործանումը»[2] զեկույցը՝ նվիրված ակումբի հիմնադրման 50-ամյակին: Հռոմի ակումբը, ըստ էության, արտացոլում է աշխարհի քաղաքական և տնտեսական վերնախավի հիմնարար եզրահանգումները և մոտեցումները մոլորակի ներկա իրավիճակի և զարգացման ուղիների վերաբերյալ: Զեկույցը բաղկացած է երեք մասից: Առաջինում նկարագրվում են առկա ճգնաժամային իրադրությունն իր ողջ էությամբ և դրա խորացման միտումները[3]: Երկրորդ գլխում քննադատվում է այսօր տիրապետող աշխարհայացքը և առաջ քաշվում «Նոր աշխարհընկալման» այլընտրանքային փիլիսոփայությունը: Երրորդ մասը նվիրված է գործնական և, որ կարևորն է, համակարգային լուծումներին: Մեզ համար հատկապես էական է զեկույցի այն հատվածը, որը վերաբերում է կրթության հիմնախնդիրներին: Դրանց առնչությամբ հեղինակների խումբը կատարում է մի շարք հետաքրքրական եզրահանգումներ: Նշենք դրանցից մի քանիսը:

Սխալների հաղթահարումը և «նոր լուսավորչությունը»: Ժամանակակից աշխարհընկալումը շաղկապված է ռեդուկցիոնիստական[4] մտածողության գերիշխանությամբ և գիտելիքի, որպես ամբողջության, մասնատմամբ: Մինչդեռ «ռեդուկցիոն փիլիսոփայությունը չի գործում ոչ միայն կենդանի համակարգերի ընկալման, այլև կործանարար սոցիալական և տնտեսական աճի ողբերգության հաղթահարման համար»: Զեկույցի հեղինակները մատնանշում են «իրականության՝ որպես ամբողջության ընկալման փոխարեն, այն բազմաթիվ մանր կտորների բաժանելու» միտման բացասական բնույթը: Նաիվ ռեալիզմը և մատերիալիզմը փիլիսոփայության տեսանկյունից անհիմն են, իսկ գիտականորեն՝ պարզապես սխալ:

[2] TAnders Wijkman, Ernst Ulrich von Weizsäcker, *Come On! Capitalism, Short-termism, Population and the Destruction of the Planet. — Springer, 2018.*

[3] Խոսքը 2008 թ.-ին սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի մասին է:

[4] Ռեդուկցիոնիզմը մի քանի հարակից փիլիսոփայական գաղափարներից որևէ մեկն է, որը վերաբերում է երևույթների միջև կապերին, որոնք կարելի է նկարագրել այլ՝ ավելի պարզ կամ հիմնարար երևույթների տեսանկյունից:

Խոսելով Հայզենբերգի (Werner Karl Heisenberg) անորոշությունների առնչության և Բորի (Niels Bohr) կոմպլեմենտարության սկզբունքի մասին՝ հեղինակները հիշեցնում են, որ «ճանաչողության հիմքը գիտնականի և նրա ուսումնասիրության օբյեկտի փոխհարաբերությունն է»: Նաև չի բացառվում գիտական և կրոնական որոնումների համաձայնեցումը: Մենք էլ հավելենք՝ ճանաչողության հիմքը նաև լավ մանկավարժի կենդանի շփումն է ուսանողների (և նաև դպրոցականների) հետ:

Այլ տնտեսություն: Օքսֆորդի համալսարանի տնտեսագետ և Հռոմի ակումբի անդամ Քեյթ Ռավորտի (Kate Raworth) խոսքով՝ այսօրվա ուսանողները, որոնք 2050-ին որոշիչ են լինելու քաղաքականության, տնտեսության և գիտության ոլորտներում, այս պահին սովորում են 1950-ականների գաղափարներով, որոնք հիմնված են 1850-ականների տեսությունների վրա: «Ավելի լավ աշխարհին» իրականություն դարձնելու համար տնտեսությունը պետք է և կարող է այլ կերպ գործել: Ակումբի զեկույցը քննության է առնում տնտեսության մի շարք այլընտրանքային մոդելներ, որոնց ընդհանրական մոտեցումն այն է, որ ապագայում տնտեսությունը պետք է ձգտի կայունության, այլ ոչ թե շարունակական աճի, և պետք է ավելացնի համընդհանուր բարեկեցությունը, այլ ոչ թե առավելագույնի հասցնի միայն մասնավորի շահը: Զեկուցողների կարծիքով, շրջանային տրամաբանությունը պիտի փոխարինելու գա գծայինին: Մասնավորապես՝ նյութական արդյունքը պիտի ենթակա լինի վերանորոգման և կրկնակի օգտագործման:

Կրթություն՝ հանուն ապագայի: Ակումբը ենթադրում է, որ կրթությունը պետք է երիտասարդության մեջ «ապագայի հանդեպ գրագիտություն» ձևավորի (futures literacy): Դրա համար կրթությունը պետք է՝

• Հիմնված լինի «կապվածության» վրա (ուսանող-դասախոս հարաբերությունները պետք է մնան առաջնային): Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը «արժեքավոր և արդյունավետ է միայն այն դեպքում, եթե նպաստում է մարդկանց միջև կապին»: Կրթությունը պետք է հետաքրքրություն առաջացնի: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի նախ՝ ինքն իր համար և անպայմանորեն մյուսներին օգնի սովորել[5]:

• Կրի արժեքային բնույթ՝ հիմնված համապիտանի արժեքների և մշակութային տարբերությունների հարգանքի վրա: Զեկուցողների բնորոշմամբ՝ «արժեքը դարերի ընթացքում մարդկության կուտակած իմաստությունն է»:

• Հիմնվի կայունության վրա: Գիտելիքի շատ տեսակներ համեմատաբար վերջերս են առաջացել (էկոլոգիա, համակարգերի փոխադարձ կապ, կայուն զարգացում) և դեռևս չեն դարձել համընդհանուր գիտական մտքի մաս, ուստի դրանց մատուցումը նոր սերնդի համար սկզբունքային նշանակություն ունի:

• Ներմուծի ինտեգրալ մտածողություն և չսահմանափակվի վերլուծական մտածողությամբ: Միայն համակարգային մտածողության ձևավորումը երիտասարդների մեջ բավական չէ, քանի որ այն պահպանում է իրականությունը մեխանիկորեն ընկալելու միտումներ և չի ենթադրում երևույթների օրգանական կապվածության վերլուծում ու ըմբռնում:

• Ելնի բովանդակության բազմակարծիքային բնույթից: Մասնավորապես՝ շատ համալսարաններ առաջնությունը տալիս են մտածողության այս կամ այն դպրոցներին, փոխանակ երիտասարդներին հրամցնեն կոմպլեմենտար և անգամ իրարամերժ հեռանկարների ամբողջությունը: Այսօրվա ուսանողներին անհրաժեշտ է ներառական կրթություն, որը ենթադրում է գիտելիքի տարբեր ձևերի փոխլրացում՝ փոխանակ իրար բացառելու և մերժելու: Մշակութային բազմազանությունը նույնքան անհրաժեշտ է սոցիալական էվոլյուցիայի համար, որքան գենետիկական բազմազանությունը՝ կենսաբանականի համար:

[5] Այս առումով, ուսանելի է ամերիկյան փորձը, որը ներդրված է, մասնավորապես, Հայաստանի ամերիկյան համալսարանում (AUA): Այս մեթոդը ենթադրում է բարձր կուրսերի ուսանողների պարբերական շփումը ցածր կուրսերի ուսանողների հետ՝ վերջիններիս արագ ինտեգրման և ուսումնական գործընթացի դժվարությունների հաղթահարման նպատակով:

Հռոմի ակումբի եզրահանգումները դոգմատիկ բնույթ չունեն, սակայն Հայաստանի համար այսօր կարևոր է ինտեգրվել աշխարհին, ուստի նոր հայացքների իմացությունը և, ըստ անհրաժեշտության, դրանց կիրառումը դառնում են հրամայական:

Մեզանում հիմնականում գերակշռում են դժգոհություններն ուսանողներից և ուսուցման գործընթացից՝ առանձնապես չանդրադառնալով պրոֆեսորադասախոսական անձնակազմի համակողմանի ներդրման հարցերին: Մինչդեռ, հաշվի առնելով հասարակական պահանջը, այսօր հենց վերջինս պիտի նախաձեռնություն ցուցաբերի, որպեսզի ապահովվեն ուսուցողական գործընթացի շարունակականությունը և հաջողությունը: Այս առումով, «հեծանիվ հայտնագործելու» կարիք, թերևս, չկա, քանի որ առկա է միջազգային դրական փորձը, որը կարելի է տեղայնացնել հայաստանյան կրթական միջավայրում:

Միաժամանակ, պետք է անկեղծ լինել. աշակերտների և նաև ուսանողների հետ աշխատանքը պետք է հիմնված լինի ոչ միայն հասարակական գիտակցության պահանջների, այլև մարդկային պարզունակ բնազդների ընկալման վրա: Մատուցվող յուրաքանչյուր նյութ պետք է լինի հետաքրքրական և առարկայական, եթե անգամ խոսքը տեսական և հիմնարար գիտակարգերի մասին է: Այս առումով, օրինակ, շատ ուսուցողական է ամերիկացի ֆիզիկոս տեսաբան Ռիչարդ Ֆեյնմանի մեթոդաբանությունը: Ֆեյնմանը ոչ միայն առաջատար գիտնական էր և Նոբելյան մրցանակի դափնեկիր, այլև փայլուն դասախոս: Դասավանդելը բնատուր շնորհք է և ամեն մեկին տրված չէ: Նյութին լավ տիրապետելը դեռևս չի նշանակում այն ուսանողին մատուցելու ունակություն: Փորձի և գիտելիքի փոխանցման համար անհրաժեշտ է երկու բաղադրիչի միաժամանակյա կիրառում՝ նյութի իմացություն և մանկավարժական հմտություն:

Ֆեյնմանն առաջարկում է դասավանդման հետևյալ դրույթները՝

1. Սովորեցրեք երեխային

Մաքուր թուղթ վերցրեք և գրեք նյութի վերնագիրը: Այնուհետև մի կողմ դրեք բարդ բառերն ու տեխնիկական բառապաշարը և փորձեք շարադրել նյութն այնպես, ասես այն բացատրում եք բնագավառի հետ որևէ առնչություն չունեցող մեկին կամ էլ, որ ավելի լավ է, ութնամյա երեխային: Ինչպես նշում է Ֆեյնմանը, բարդ բառերն ու տեխնիկական եզրույթներն ինքնախաբեություն են: Դրանք պետք է թողնել գիտական զեկույցի համար:

Ամենատարածված ու պարզ բառերով բացատրեք ինքներդ ձեզ կամ էլ ութնամյա երեխային, թե ինչի մասին եք խոսում: Այս մոտեցումը կօգնի ըմբռնել երևույթների ներքին կապերն ու մտքերի տրամաբանական շղթան: Որոշակի ջանքերի շնորհիվ՝ կտեսնեք, թե որտեղ են թաքնված մութ կետերը: Հենց դրանց հաղթահարումն էլ նշանակում է «սովորել»:

2. Կրկնեք նյութը

Սա, հիրավի, այն դեպքն է, երբ կրկնությունը գիտության մայրն է: Նյութին կրկնակի անդրադառնալով եք միայն նկատում բացթողումներն ու մտքերի գործառնական կապերը: Ուստի կրկնեք և լրացրեք բաց կետերը: Հենց այս ճանապարհով եք հասնում ձեր ճանաչողության և իմացության սահմաններին: Իսկ սովորելը նաև ենթադրում է անցնել այդ սահմանները, լայնացնել պրոֆեսիոնալ մտահորիզոնը և գիտելիքի դաշտը: Ընդ որում, սա շարունակական գործընթաց է: Իմացության սահմանների բացահայտումը սահմանափակում է ձեր սխալները, որոնք դուք, սովորաբար, կատարում եք, և ավելացնում գիտելիքի կիրառման հաջողությունը: Վերացական գիտությունը ոչինչ է: Գիտելիքի ուժը դրան տիրապետելն ու կյանքում կիրառելն է:

3. Կազմադասեք և պարզեցրեք նյութը

Նորից աչքի անցկացրեք ձեր գրավոր նոթերը և համոզվեք, որ նախնական աղբյուրից որևէ եզրույթ տեղ չի գտել ձեր գրառումներում: Այնուհետև այդ նոթերից պատմվածքի պես մի նյութ կազմեք ու բարձրաձայն ընթերցեք: Կրկին խնդրեք ձեր ութնամյա ընկերոջը լսել ձեր պատմվածքը: Եթե այն տակավին հասկանալի չէ և պարունակում է անհասկանալի մտքեր

ու անցումներ, ապա մի՛ զլացեք՝ շարունակեք կազմադասել և պարզեցնել՝ մինչև որ հասնեք ցանկալի արդյունքին:

4. Փոխանցեք ուրիշին (ոչ պարտադիր կետ)

Գիտելիքը կամ տեղեկությունը կորցնում է իր իմաստը, եթե այն հնարավոր չէ փոխանցել ուրիշներին: Կրկին օգնության կանչեք ձեր ութնամյա «ընդդիմախոսին» կամ էլ մեկին, որը գրեթե ոչինչ չի հասկանում նյութից, և փորձեք նրա մտքին հասցնել ձեր շարադրանքը: Ոչինչ այնպես չի ապացուցում առարկայի ձեր իմացությունը, որքան ոչ քաջատեղյակ մեկին այն փոխանցելը:

Այս հակիրճ ու, միաժամանակ, չափազանց ուսանելի մեթոդաբանությանն ավելացնենք մի քանի կետ մեր կողմից՝ հաշվի առնելով տեղայնացման կարևորությունն ու ժամանակի հրամայականները:

Մեր կարևոր առաջարկներն են՝

Դասավանդեք մե՛կ լեզվով

Եթե դասավանդում ենք հայերեն, ապա խոսենք մաքուր և գրական լեզվով: Գրագետ խոսքն առողջ տրամաբանության արգասիք է: Եթե դասավանդում ենք անգլերեն, ապա խոսենք մաքուր և գրական անգլերենով և այլն: Ի դեպ, հայոց լեզվի հնարավորություններն այս առումով անսահմանափակ են: Այն տեսակետը, թե հայոց տեխնիկական լեզուն անընդունակ է հրամցնելու հայերեն զուգահեռ ձևերն ու եզրույթները, պարզապես դուրս է քննադատությունից: Միաժամանակ, խրախուսելի է, որ տեխնիկական բառապաշարը զուգակցվի հատկապես անգլերեն համարժեքներով: Ժամանակակից աշխարհի հաղորդակցման լեզուն անգլերենն է, ուստի անհրաժեշտ է ուսանողներին պատրաստել այդ լեզվով զուգահեռ աշխատելուն և հաղորդակցվելուն:

Ջանասիրաբար նախապատրաստվեք դասերին և դասախոսություններին

Անգամ «իմպրովիզները» պետք է մտածված և քննություն բռնած լինեն: Ամեն դասախոսություն պետք է գիտական զեկույցի պես փայլուն անցնի: Սա, անկասկած, ոգևորում է ոչ միայն ուսանողներին, այլև հենց իրենց՝ դասախոսներին:

Դասավանդեք սիրով և խանդաղատանքով

Ուսանողը պետք է տեսնի դասախոսի աչքերի փայլն ու սիրահարվի առարկային: Ուսանողին ոգեշնչելն ու դռներ ցույց տալը մանկավարժի մեծագույն առաքելությունն է:

Նյութը մատուցեք առավելագույնս հետաքրքրական ու գրավիչ ձևով

Տաղտուկ նյութը «մահացու» է ուսուցողական գործընթացի համար: Եթե հենց առաջին դասախոսության ընթացքում ուսանողի մեջ ոգևորություն չառաջանա, ապա, ամենայն հավանականությամբ, այդ վերաբերմունքը կմնա մինչև վերջ:

Դրսևորեք արտիստիզմ

Դասախոսն էլ է բեմի վրա: Ուսուցման գործընթացում պետք է համադրվեն բովանդակությունը և ձևը: Անգամ դասախոսի ձայնի ելևէջները, արտաքինը, պահվածքը, լսարանում համապատասխան տրամադրության և վարքի ապահովումը էական նշանակություն են ձեռք բերում:

Գնահատեք ժամանակը

Ընդ որում, թե՛ ձեր ժամանակը, թե՛ ուսանողինը: Նախապատրաստվել պետք է՝ ժամացույցին նայելով և չմոռանալով ժամանակի կառավարման հիմունքները: Թանկ է ոչ միայն դասախոսի, այլև ուսանողի ժամանակը: Դասավանդման գործընթացում կարևոր է «ազատ» ժամանակի ապահովումը հարցուպատասխանի համար: Կարևորվում է մարդկային գործոնը դասավանդման հայեցակարգում:

Հասեք նրան, որ ուսանողը սովորի ինքնուրույն աշխատել ու մտածել

Այլապես նա հավերժական ուսանող կմնա: Այս առումով, կարևորվում են ավարտական և մագիստրոսական աշխատանքները, գիտական զեկուցումներն ու ռեֆերատները, որոնց հիմնական նպատակը հենց ինքնուրույն աշխատելու հմտություն ձեռք բերելն է: Ցավալի է այն հանգամանքը, որ գիտական գրադարաններից այսօր գրեթե ոչ ոք չի օգտվում: Ուսանողները նախապատվությունը տալիս են համացանցային աղբյուրներին, որոնք կարող են լրացնել հիմնական նյութը, բայց ինքնաբավ լինել չեն կարող:

Համալսարաններում խրախուսվում է տարաբնույթ բաց դասախոսությունների կազմակերպումը: Որպես տարբերակ՝ կարող է ներկայացվել նոր տեխնիկական գրականություն՝ հեղինակների, թարգմանիչների կամ խմբագիրների կողմից: Ժամանակակից մարդը պարտավոր է ունենալ համակողմանի գիտելիք և տեղեկություններ ամենատարբեր բնագավառներից: Այս առումով, կարևորվում է կամ ընտրովի առարկաների ներդրման կամ առավել արդյունավետ օգտագործման մեթոդը: Ընդ որում, այդ առարկաները կարող են անգամ չառնչվել հիմնական մասնագիտական ուղվածությանը: Տասնվեցտասնյոթ տարեկան երիտասարդներին շատ դժվար է կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում: Սխալվելու հավանականությունն առկա է, ուստի կարելի է ընթացքում փորձել մասնագիտության ընտրության հարցում տատանվող ուսանողներին ճիշտ խորհուրդներ և ուղղություն տալ:

Այսօրվա գերբարդ աշխարհաքաղաքական իրավիճակի հրամայականն է տեսնել, հասկանալ, գնահատել երևույթները և միայն դրանից հետո առաջ գնալու համալիր քայլեր մշակել: Այս պատասխանատվությունը դրված է առավելապես հասարակության այսօրվա և վաղվա առաջավոր զանգվածների վրա: Տգիտությունը (բառիս լայն իմաստով) եղել և մնում է հասարակական և անձնական խնդիրների հիմնական պատճառը: Պետականությունը պահպանելու ու հզորացնելու գործում առաջնային է կրթության նշանակությունը: Պետք է հնարավորինս պահպանել լավագույն ավանդույթները և ձգտել զարգացնել դրանք՝ ելնելով աշխարհի առաջավոր փորձից: Բարձրագույն կրթությունը, նախ և առաջ, պետք է պատասխանատվություն սերմանի երիտասարդության շրջանում: Այսինքն՝ այն մարդկանց, որոնք մոտալուտ ապագայում ստանձնելու են երկրի կառավարման ղեկը: Որքան ավելի պատասխանատու և արհեստավարժ լինեն այդ մարդիկ, այնքան ավելի վստահելի ձեռքերում կլինի երկիրն ու նույնչափ պակաս վտանգավոր կլինեն քաղաքական և տնտեսական ցնցումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Anders Wijkman, Ernst Ulrich von Weizsäcker, Come On! Capitalism, Short-termism, Population and the Destruction of the Planet. - Springer, 2018
2. Danning-Kruger effect. https://www.britannica.com/science/Dunning-Kruger-effect
3. Barnum effect. https://neurofied.com/barnum-effect-the-reason-why-we-believe-our-horoscopes/
4. Richard Feynman. https://fs.blog/feynman-learning-technique/

Давид ХАЧИЯН
Кандидат экономических наук

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

СУЖДЕНИЯ О МЕТОДОЛОГИИ СОВРЕМЕННОГО ОБРАЗОВАНИЯ

Управление образованием и его модернизация являются основными приоритетами государственной политики. Только путем подготовки квалифицированных кадров можно преодолеть стоящие перед страной проблемы и построить более или менее реалистическое видение будущего. Молодое поколение, обучающееся сегодня в школах и вузах, завтра возьмет на себя управление страной, поэтому вопросы образования, практического применения знаний и их последующей передачи актуальны как никогда. В связи с этим, грамотная организация всего учебного процесса обязана полностью отвечать требованиям времени. К сожалению, сегодня мы сталкиваемся с проблемой поверхностного и даже неграмотного отношения ко всему процессу образования. Такое восприятие чревато серьезными последствиями сегодня и особенно через пару десятилетий, когда сегодняшнее молодое поколоние будет играть ключевую роль в управлении государства во всех сферах человеческой деятельности. В целях решения проблемы, в частности, можно применить передовую метологию образования, которая отвечает требованиям управления в современном сложном мире.

Ключевые слова: *образование, Ричард Фейнман, системы управления, Римский клуб*

David KHACHIYAN
PhD in Economics

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

THOUGHTS ABOUT THE METHODOLOGY OF CONTEMPORARY EDUCATION

The management and modernization of the educational process are the main priorities of the state policy. The training of qualified personnel is the only solution to overcome the problems facing the society and to form a more or less realistic vision of the future. The younger generation studying today at schools and universities will take over the rule of the country tomorrow. Therefore, today, the issues of education, the practical application of knowledge and its subsequent transition are extremely essential. In this regard, the competent organization of the entire process of education must fully meet the requirements of the time. Unfortunately, today we are facing the problem of superficial and even illiterate attitude towards the entire process of education. This perception is fraught with serious consequences today and especially in a couple of decades, when today's young generation will play a key role in the management of the state in all spheres of human activity. In order to fix the problem, in particular, the advanced education methodology, that meets the requirements of management in modern complex world, should be applied.

Key words: *education, Richard Feynman, management systems, Club of Rome*